ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/4 ծկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2017 թվականիօգոստոսի 14-ին կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/4 պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2018 թվականի սեպտեմբերի 20-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1	Կապալառու կազմակերպության գրությունը՝ Պայմանագրի 2018 թվականի փետրվարի 15-ին կնքված N 2 համաձայնագրով սահմանված աշխատանքների կատարման վերջնաժամկետի երկարացման մասին և պատասխանատու ստորաբաժանման համաձայնությունը:
Փոփոխության նկարագրություն	30 օրով երկարացվել է N 2 համաձայնագրի գործողության ժամկետը:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 8.4 կետով սահմանված դրույթը:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

14.08.2017թ. կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/4 գնման պայմանագրի

ք. Երևան 20.09.2018թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ-ն (այսուհետ՝ Կապալառու)՝ ի դեմս ընկերության տնօրեն Հ. Մնացականյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների իրականացման համար Կողմերի միջև 14.08.2017թ. կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/4 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.4 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին.

1.1.1 2018 թվականի փետրվարի 15-ին կնքված N 2 համաձայնագրի հավելված N 1-ով սահմանված օրացուցային գրաֆիկի.

ա) 3-րդ տողում <<20.09.2018թ.>> բառերը փոխարինել <<19.10.2018թ.>> բառերով,

բ) 4-րդ տողում <<21.09.2018թ.>> բառերը փոխարինել <<20.10.2018թ.>> բառերով, իսկ <<31.10.2018թ.>> բառերը՝ <<29.11.2018թ.>> բառերով:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք. Գավառ, Անդրանիկի 5
կառավարական տուն 3	<<Արմսվիսբանկ>> ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 2500010066920100
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 08404037
Հ/Հ 900011012599	
ՀՎՀՀ 02565827	

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Տնօրեն՝

_____ Հ. Մնացականյան
(ստորագրություն)
Կ.Տ.